



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ ՈՒ Ն  
13 ապրիլի 2018 թվականի N 75-Ա

## ՍՈՒՍԱՆՆԱ ԴԱՎԹՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածի 1-ին մասով՝

### Կ ա Ր Գ ա Դ Ր Ո Ւ Թ Յ Մ.

1. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Սուսաննա Դավթյանին 2018 թվականի ապրիլի 16-ից 18-ը ներառյալ գործուղել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ ՀՀ 2018թ. պետական բյուջեի կատարման և ՀՀ 2018թ. պետական բյուջեով սահմանված ծրագրերի իրականացման մասին հաշվետվությունները ներկայացնելու նպատակով:

2. Գործուղման ծախսերը կատարել Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի N 2335-Ն որոշմամբ սահմանված կարգով:

3. Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ս. Դավթյանին՝ գործուղումից վերադառնալուց հետո, եռօրյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետին ներկայացնել գործուղման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն:

Կից՝ ՀՀ ֆինանսների նախարարության 2018թ. մարտի 15-ի N01.1/10-2/4496-18 գրությունը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ



Վ. ԱՎԱԿՅԱՆ

2018թ. ապրիլի 13  
ք. Կապան